ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2026թ. փետրվարի 18-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 30-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը:

Քվորումը ստուգելուց առաջ խորհրդի նախագահը նշեց, որ գիտխորհրդի կազմում կատարվել են փոփոխություններ: ԳԽ հրավիրյալ անդամ «Արցախբանկ» ՓԲԸ-ի զարգացման գծով տնօրեն, տնտեսագիտության թեկնածու Լևոն Աշոտի Մարտիրոսյանի ցանկությամբ նրա լիազորությունները որպես գիտխորհրդի անդամ դադարեցվել են և նրա փոխարեն ԳԽ հրավիրյալ անդամ է հաստատվել «Յունիբանկ» ԲԲԸ-ի UBPay ազգային վճարային համակարգի տնօրենի տեղակալ, տնտեսագիտության թեկնածու Արման Ալբերտի Սարգսյանը: Գիտխորհրդի կազմից հանվել է ԳԽ ընտրովի անդամ ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի տեղակալ, Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նարինե Միրզոյանը՝ այլ աշխատանքի տեղափոխվելու հիմքով, և որպես ընտրովի անդամ հաստատվել է ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ. Անի Խալաթյանը, ով նաև դեկանի տեղակալ է նշանակվել: Գիտխորհրդի կազմից հանվել են ԳԽ սովորող անդամներ Վիկտորյա Մաթևոսյանը, Անահիտ Սվազյանը՝ սովորողի կարգավիճակի դադարեցման հիմքով, և Սուսաննա Բաղդասարյանը՝ սեփական դիմումի համաձայն: Ֆակուլտետի Ուսանողական խորհուրդը նրանց փոխարեն ֆակուլտետի ԳԽ սովորող անդամներ է ընտրել՝ Լիանա Էդգարի Այվազյանին (ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարում» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի), Էրիկ Էդգարի Զաքարյանին (ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող), Արեն Ռուսլանի Ղազարյանին (ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսներ» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող): Խորհրդի նախագահի առաջարկով, խորհրդի անդամները շնորհավորեցին գիտխորհրդի նորընտիր անդամներին և մաղթեցին համատեղ բեղուն աշխատանքային գործունեություն:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Կրթական ծրագրերի ղեկավարների ընտրություն և հաստատում
2. 2025/26 ուստարվա 2-րդ կիսամյակում ուսանողներին անվանական կրթաթոշակների տրամադրում
3. ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած գիտական դրամաշնորհներին հայտերի երաշխավորում
4. Ուսումնական ձեռնարկի և դասագրքի տպագրության երաշխավորում
5. 2025/26 ուստարվա 2-րդ կիսամյակում պրոֆեսորի օգնականների հաստատում
6. Ընթացիկ հարցեր

1. Կրթական ծրագրերի ղեկավարների ընտրություն և հաստատում

1.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ ՏԿՖ «Կառավարում» բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի ընտրության և հաստատման մասին հարցը:

1.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Կառավարում» բակալավրի կրթական ծրագրի նախկին ղեկավար տ.գ.թ., դոցենտ Նարինե Միրզոյանը տեղափոխվել է այլ աշխատանքի և ֆակուլտետում շարունակում է իր աշխատանքը համատեղության սկզբունքով: Սույն հանգամանքով պայմանավորված «Կառավարում» բակալավրի կրթական ծրագրի նոր ղեկավարի համար առաջարկվում է Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նոննա Խաչատրյանի թեկնածությունը, ով ակտիվորեն ներգրավված է սույն կրթական ծրագրի աշխատանքներում: Հավելեց, որ տ.գ.թ., դոցենտ Նոննա Խաչատրյանը ակտիվորեն մասնակցում է ֆակուլտետի ուսումնագիտական աշխատանքներին և այսուհետ համակարգելու է նաև ֆակուլտետի կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրման գործընթացը:

2. Ելույթ ունեցավ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ. Աննա Հակոբջանյանը՝ նշելով, որ տ.գ.թ., դոցենտ Նոննա Խաչատրյանի հետ միասին երկար աշխատել են ներկաներից շատերը, արժանի ընտրություն է՝ և՛ անձնային որակների, և՛ համատեղ արդյունավետ աշխատանքի առումով:

Հարցեր չհնչեցին:

3. Հարցի քննարկումն ամփոփելով՝ դեկան Կ.Խաչատրյանը առաջարկեց՝ «Կառավարում» բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի ընտրության և հաստատման մասին հարցը դնել քվեարկության:

1.1. ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ «Կառավարում» բակալավրի կրթական ծրագրի ղեկավար հաստատել Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նոննա Խաչատրյանին:

ՏԿՖ «Կառավարում» բակալավրի կրթական ծրագրի ղեկավարը հաստատվեց՝ միաձայն քվեարկությամբ (30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

1.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ ՏԿՖ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրատուրայի կրթական ծրագրի ղեկավարի ընտրության և հաստատման մասին հարցը:

1.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրատուրայի կրթական ծրագիրը՝ փոփոխությունից և արդիականացումից հետո, 2024/25 ուստարում չէր հաջողվել կայացնել, սակայն 2025/26 ուստարում ծրագիրը կայացել է և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման գծով: Հավելեց, որ ծրագրի ղեկավարի համար առաջարկվում է ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Հասմիկ Հովհաննիսյանի թեկնածությունը:

2. Հարցեր չինչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

3. Հարցի քննարկումն ամփոփելով՝ դեկան Կ.Խաչատրյանը առաջարկեց՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրատուրայի կրթական ծրագրի ղեկավարի ընտրության և հաստատման մասին հարցը դնել քվեարկության:

1.2 ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրատուրայի կրթական ծրագրի ղեկավար հաստատել Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Հասմիկ Հովհաննիսյանին:

ՏԿՖ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրատուրայի կրթական ծրագրի ղեկավարը հաստատվեց՝ միաձայն քվեարկությամբ (30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2. ԼՍԵՑԻՆ. 2025/26 ուստարվա 2-րդ կիսամյակում ուսանողներին անվանական կրթաթոշակների տրամադրման մասին հարցը:

2. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ 2025/26 ուսումնական տարվա գիտխորհրդի առաջին նիստում հաստատվել է ֆակուլտետի համար սահմանված անվանական կրթաթոշակառուների ցուցակը՝ ըստ գործող կարգի: Սույն կարգի համաձայն, այդ ցուցակը պետք է հաստատվի նաև այս կիսամյակ՝ հիմք ընդունելով ուսանողների 4

կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմությունը և հասարակական ակտիվությունը: Հավելեց, որ անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների ընտրության արդյունքում 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակառուները կշարունակեն անվանական կրթաթոշակներ ստանալ նաև 2-րդ կիսամյակում, քանի որ գլխավորում են հավակնորդների ցուցակը ավելի բարձր ամփոփիչ ՄՈԳ-ով՝ Բենիկ Արտեմի Բալայան (3-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,98), Անի Մկրտիչի Հովհաննիսյան (3-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,72), Անի Գարիկի Ամիրխանյան (4-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,66), Ադրինե Գրիգորի Ավետիսյան (4-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,65):

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց 2025/26 ուստարվա 2-րդ կիսամյակում անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը դնել քվեարկության՝ երաշխավորել ընտրված ուսանողներին շարունակելու ստանալ նշված անվանական կրթաթոշակները:

2. ՈՐՈՇԵՑԻՆ.

1) «Կառավարում» մասնագիտության բակալավրի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանող Բենիկ Արտեմի Բալայանին երաշխավորել շարունակելու ստանալ Գրիգոր Տաթևացու անվան կրթաթոշակ:

2) «Կառավարում» մասնագիտության բակալավրի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողուհի Անի Մկրտիչի Հովհաննիսյանին երաշխավորել շարունակելու ստանալ Գրիգոր Հասրաթյանի անվան կրթաթոշակ:

3) «Ֆինանսներ» մասնագիտության բակալավրի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողուհի Անի Գարիկի Ամիրխանյանին երաշխավորել շարունակելու ստանալ Գրիգոր Հարությունյանի անվան կրթաթոշակ:

4) «Ֆինանսներ» մասնագիտության բակալավրի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողուհի Ադրինե Գրիգորի Ավետիսյանին երաշխավորել շարունակելու ստանալ Ստեփան Սիտարյանի անվան կրթաթոշակ:

2025/26 ուստարվա 2-րդ կիսամյակում անվանական կրթաթոշակներ նշանակելու որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ (30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

3. ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած գիտական դրամաշնորհներին հայտերի երաշխավորում

3.1 ԼՍԵՑԻՆ. ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Նպատակային ծրագրեր - 2027» մրցույթին՝ «Հայաստանում ՓՄՁ-ների և ստարտափների ֆինանսավորման ապահովման նպատակով քրաուդֆանդինգի և քրաուդինվեստինգի մեխանիզմների կիրառման հնարավորությունների վերլուծություն»

(գիտահետազոտական խմբի ղեկավար՝ տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարություն Զաքոյան) գիտական թեմայով հայտի երաշխավորման մասին հարցը:

3.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տեխ.գ.թ. Հարություն Զաքոյանը՝ որպես գիտահետազոտական խմբի ղեկավար, ամփոփ ներկայացրեց գիտական թեմայի արդիականությունը և ռազմավարական հիմնախնդիրը, որոնց լուծման մեխանիզմների մշակմամբ պետք է զբաղվի ձևավորված գիտահետազոտական խումբը: Մասնավորապես, շեշտադրեց ՀՀ ՓՄՁ ոլորտի և ստարտափ էկոհամակարգի զարգացման ֆինանսավորման աղբյուրների սահմանափակ հասանելիությունը, վենչուրային կապիտալի սահմանափակ ծավալները, ինչպես նաև քրաուդֆանդինգի և քրաուդինվեստինգի մեխանիզմների կիրառման համապարփակ օրենսդրական կարգավորման բացակայությունը, ներդրողների պաշտպանության մեխանիզմների անկատարությունը, թվային ֆինանսական հարթակների նկատմամբ վստահության պակասը: Հիմնավորեց նախագծի նպատակը՝ ձևավորել ՀՀ-ում քրաուդֆանդինգի և քրաուդինվեստինգի կայացման գիտականորեն հիմնավորված ինստիտուցիոնալ, իրավական և մեթոդական հիմքեր, ապահովելով կապիտալի շուկայի զարգացման, ձեռնարկատիրության աջակցության և սփյուռքի հետ տնտեսական համագործակցության խթանման գործընթացները:

2. Հարցեր հնչեցրեցին տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Սահակյանը: Հարցադրումները առնչվում էին մրցույթին ներկայացվող գիտական թեմայի ամբիոնում պարտադիր քննարկման պահանջին, գիտահետազոտական խմբի անդամների հավաքագրման սկզբունքներին:

3. Հարցադրումներին պատասխանելով դոցենտ, տեխ.գ.թ. Հարություն Զաքոյանը նշեց, որ հայտի մշակման ժամանակ հետևել են ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված մրցույթի պահանջներին՝ ըստ որի, պահանջվում է ֆակուլտետի Գիտական խորհրդի երաշխավորությունը և գիտահետազոտական խմբում մինչև 35 տարեկան 2 հետազոտողի ընդգրկվածություն:

4. Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ. Աննա Հակոբջանյանը՝ հարցադրումներին անդրադառնալով, նշեց, որ ամբիոնի երաշխավորության պահանջի բացակայության պատճառով այս հարցով ամբիոնի նիստ չի հրավիրվել, սակայն ամբիոնում աշխատանքային կարգով քննարկում է կազմակերպվել սույն հայտի հետ կապված:

Ելույթ ունեցողներ չեղան:

5. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարվող ամենամյա մրցույթների արդյունքում ներկայացված հայտերի միայն մի մասն է ֆինանսավորվում: Մասնավորապես, վերջին տարիներին ֆակուլտետի կողմից ներկայացված 29 հայտից ֆինանսավորվել են 13-ը,

ինչը լավ արդյունք է: Հավելեց, որ մրցույթի պարտադիր պահանջներից՝ Գիտական խորհրդի երաշխավորությունը նպատակ ունի ամրագրել թեմայի արդիականությունը: Հարցի քննարկումն ամփոփելով՝ դեկան Կ.Խաչատրյանը առաջարկեց՝ քվեարկությամբ հայտը երաշխավորել մրցույթին մասնակցելու համար:

3.1 ՈՐՈՇԵՑԻՆ. «Հայաստանում ՓՄՁ-ների և ստարտափների ֆինանսավորման ապահովման նպատակով քրաուդֆանդինգի և քրաուդինվեստինգի մեխանիզմների կիրառման հնարավորությունների վերլուծություն» (գիտահետազոտական խմբի ղեկավար՝ տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարություն Զաքոյան) գիտական թեմայով հայտը երաշխավորել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Նպատակային ծրագրեր - 2027» մրցույթին մասնակցելու համար (30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

3.2 ԼՍԵՑԻՆ. ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Նպատակային ծրագրեր - 2027» մրցույթին՝ «ՀՀ էներգետիկ ոլորտի ներդրումների և էներգաարդյունավետության բարձրացման հիմնահարցերը տնտեսության կառուցվածքային փոփոխությունների համատեքստում» (գիտահետազոտական խմբի ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու Անի Խալաթյան) գիտական թեմայով հայտի երաշխավորման մասին հարցը:

3.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ. Անի Խալաթյանը՝ որպես գիտահետազոտական խմբի ղեկավար, հակիրճ ներկայացրեց գիտական թեմայի արդիականությունը, հետազոտական ծրագրի նպատակը՝ բացահայտել և մոդելավորել ՀՀ-ում էներգաարդյունավետության բարձրացման վրա ազդող հիմնական մակրոտնտեսական, կառուցվածքային և ինստիտուցիոնալ գործոնները: Շեշտադրեց սույն հետազոտական ծրագրից ակնկալվող արդյունքները, նաև կիրառելիությունը: Մասնավորապես նշեց, որ հետազոտության արդյունքները՝ որպես վերլուծական հիմք, կկիրառվեն էներգաարդյունավետության բարձրացման նպատակային քաղաքականությունների մշակման և գնահատման համար, նպաստելով ՀՀ տնտեսության էներգաարդյունավետության բարձրացմանը և կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը երկարաժամկետ հեռանկարում:

2. Հարց հնչեցրեց տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը՝ մոդելավորման արդյունքում էներգետիկ ոլորտում էլեկտրաէներգիայի սակագնի հնարավոր նվազման առնչությամբ:

Ելույթ ունեցողներ չեղան:

3. Հարցի քննարկումն ամփոփելով՝ դեկան Կ.Խաչատրյանը առաջարկեց՝ քվեարկությամբ հայտը երաշխավորել մրցույթին մասնակցելու համար:

3.2 ՈՐՈՇԵՑԻՆ. «ՀՀ էներգետիկ ոլորտի ներդրումների և էներգաարդյունավետության բարձրացման հիմնահարցերը տնտեսության կառուցվածքային փոփոխությունների համատեքստում» (գիտահետազոտական խմբի ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու Անի Խալաթյան) գիտական թեմայով հայտը երաշխավորել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Նպատակային ծրագրեր - 2027» մրցույթին մասնակցելու համար (30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

3.3 ԼՍԵՑԻՆ. ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Նպատակային ծրագրեր - 2027» մրցույթին՝ «Բուհ-գործարար համայնք համագործակցության զարգացման հիմնահարցերը ՀՀ աշխատաշուկայի փոխակերպման պայմաններում» (գիտահետազոտական խմբի ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու Դավիթ Մարկոսյան) գիտական թեմայով հայտի երաշխավորման մասին հարցը:

3.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Վարդան Ալեքսանյանը՝ որպես գիտահետազոտական խմբի անդամ, նախ նշեց, որ գիտահետազոտական խմբի ղեկավար տնտեսագիտության թեկնածու Դավիթ Մարկոսյանը գործուղման է Բեռլինի Հումբոլդտի համալսարանում, հետո ամփոփ ներկայացրեց գիտական թեմայի արդիականությունը: Շեշտադրեց հետազոտական ծրագրի նպատակը՝ խթանել կրթությունից դեպի կայուն զբաղվածություն անցման գործընթացը, ձևավորելով բուհ–գործարար համայնքի ռազմավարական համագործակցության առաջադեմ և ինստիտուցիոնալ մոդելներ: Հանգամանալից ներկայացրեց սույն հետազոտական ծրագրի շրջանակում նախատեսվող քայլերը՝ իրականացնել աշխատաշուկայի կարիքների համակողմանի վերլուծություն, զարգացնել բուհերի և գործարար հատվածի միջև մշտական երկխոսության հարթակներ, համատեղ մշակել կրթական և վերապատրաստման մոդուլներ, ինչպես նաև ներդնել փորձարարական համագործակցության մեխանիզմներ՝ ներառյալ պրակտիկաները, մենթորությունը և համատեղ նախագծերը: Հավելեց, որ հետազոտության արդյունքները կմեծացնեն կրթության և տնտեսության միջև կապի արդյունավետությունը և կնպաստեն ներառական ու կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը երկարաժամկետ հեռանկարում:

2. Հարցեր հնչեցրեցին տնտեսագիտության թեկնածու Արման Սարգսյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը: Հարցադրումները առնչվում էին բուհ-գործարար համայնք կապի փոխարեն կրթություն-աշխատաշուկա կապի դիտարկմանը, գիտահետազոտական խմբի ղեկավարի ԵՊՀ աշխատակից չլինելու հանգամանքին:

3. Հարցադրումներին պատասխանելով տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյանը նշեց, որ գիտական թեմայի անվանումը ձևակերպել է թեմայի պատվիրատուն՝ ՀՀ Էկոնոմիկայի

նախարարությունը, գիտահետազոտական խմբի ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու Դավիթ Մարկոսյանը եղել է իր ասպիրանտը, պաշտպանել է ֆակուլտետում գործող Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհուրդում և նմանատիպ հետազոտական փորձ է ունեցել Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում:

4. Ելույթ ունեցավ «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրատուրայի կրթական ծրագրի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Գևորգյանը՝ նշելով, որ ողջունելի է այն փաստը, որ դրսից հետազոտողներ են հրավիրվում: Հավելեց, որ այս պրակտիկան տարածված է ամբողջ աշխարհում:

5. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ֆակուլտետում արվում է հնարավոր ամեն բան երիտասարդ խոստումնալից մասնագետներին ԵՊՀ-ում ներգրավելու համար, որոնք հետազոտական աշխատանքից զատ հնարավորության դեպքում ներգրավվում են նաև դասավանդման գործընթացում: Հարցի քննարկումն ամփոփելով՝ դեկան Կ.Խաչատրյանը առաջարկեց՝ քվեարկությամբ հայտը երաշխավորել մրցույթին մասնակցելու համար:

3.3 ՈՐՈՇԵՑԻՆ. «Բուհ-գործարար համայնք համագործակցության զարգացման հիմնահարցերը ՀՀ աշխատաշուկայի փոխակերպման պայմաններում» (գիտահետազոտական խմբի ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու Դավիթ Մարկոսյան) գիտական թեմայով հայտը երաշխավորել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Նպատակային ծրագրեր - 2027» մրցույթին մասնակցելու համար (29 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ):

4. Ուսումնական ձեռնարկի և դասագրքի տպագրության երաշխավորում

4.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դասախոսներ՝ ֆ.-մ.գ.թ., դոցենտ Գայանե Մամիկոնի Ղուկասյանի, տ.գ.թ., դոցենտ Մարինե Մնացականի Բունիաթյանի և «Ինվայթս» ՍՊԸ գործադիր տնօրեն, SS ոլորտի առաջատար մասնագետ Մամիկոն Սահակի Կանոյանի հեղինակած «Python ծրագրավորման հիմունքներ» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու վերաբերյալ հարցը:

4.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ սույն ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու միջնորդությունը ներկայացրել է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդական խորհուրդը: Ընդգծեց, որ կարևոր է ֆակուլտետում իրականացվող դասընթացների ուսումնական ծրագրին համապատասխան հայալեզու ուսումնական ձեռնարկների ստեղծման և հրատարակման աշխատանքների

կազմակերպումը և հարցի քննարկման համար ձայնը փոխանցեց Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, ֆ.-մ.գ.թ. Գայանե Ղուկասյանին:

2. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, ֆ.-մ.գ.թ. Գայանե Ղուկասյանը նշեց, որ սույն ուսումնական ձեռնարկը կազմված է ֆակուլտետում դասավանդվող «Տեղեկատվական տեխնոլոգիաները տնտեսագիտությունում» դասընթացի ուսումնական ծրագրին համապատասխան: Հավելեց, որ ձեռնարկի յուրաքանչյուր բաժնում ներկայացված տեսական նյութին հաջորդում են գործնական օրինակներ, ծրագրային կոդեր, խնդիրներ և մեկնաբանություններ, նաև ներառված են առաջադրանքներ ինքնուրույն լուծելու համար: Մատնանշեց, որ նախատեսված է օնլայն հարթակ, որտեղ ուսանողը կարող է անմիջապես Python լեզվով ծրագրավորման հմտությունները զարգացնել:

3. Ելույթ ունեցավ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ. Ալվարդ Խառատյանը՝ նշելով, որ սույն ձեռնարկի հրատարակումը կօժանդակի «Տեղեկատվական տեխնոլոգիաները տնտեսագիտությունում» դասընթացի յուրացմանը, որն ի դեպ ընդգրկված է ֆակուլտետի բակալավրի երեք կրթական ծրագրերում: Հավելեց, որ աշխատանքը գրախոսել են՝ ամբիոնից տ.գ.դ, պրոֆեսոր Ռուբեն Գևորգյանը և ԵՊՀ ԻԿՄ ֆակուլտետից տեխ.գ.թ., դոցենտ Աննա Հովակիմյանը:

4. Ելույթ ունեցավ ֆակուլտետի ՈւԽ նախագահ Բենիկ Բալայանը՝ ուսանողների անունից շնորհակալություն հայտնելով, հայալեզու ուսումնական ձեռնարկների լույս ընծայման կապակցությամբ:

5. Հարցի քննարկումն ամփոփելով՝ դեկան Կ.Խաչատրյանը նշեց, որ երկու գրախոսների դրական կարծիքները, ամբիոնի որոշումը, ֆակուլտետի մեթոդխորհրդի դրական եզրակացությունը բավարար են ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու համար և առաջարկեց հարցը դնել քվեարկության:

4.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 30.01.26թ. թիվ 5 նիստի երաշխավորությունը, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դասախոսներ՝ ֆ.-մ.գ.թ., դոցենտ Գայանե Մամիկոնի Ղուկասյանի, տ.գ.թ., դոցենտ Մարինե Մնացականի Բունիաթյանի և «Ինվայթս» ՍՊԸ գործադիր տնօրեն, SS ոլորտի առաջատար մասնագետ Մամիկոն Սահակի Կանոյանի հեղինակած «Python ծրագրավորման հիմունքներ» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Ուսումնական ձեռնարկը երաշխավորվեց տպագրության՝ միաձայն քվեարկությամբ (30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

4.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նաիրուհի Մխիթարի Զրբաշյանի հեղինակած «Էկոնոմետրիկա (Մաս 1, Հիմունքներ)» վերտառությամբ դասագիրքը տպագրության երաշխավորելու վերաբերյալ հարցը:

4.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ սույն դասագիրքը տպագրության երաշխավորելու միջնորդությունը ներկայացրել է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդական խորհուրդը և հարցի քննարկման համար ձայնը փոխանցեց Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նաիրուհի Զրբաշյանին:

2. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նաիրուհի Զրբաշյանը նշեց, որ սույն դասագրքի տեսական և գործնական բովանդակությունը համապատասխանում է ֆակուլտետում դասավանդվող «Էկոնոմետրիկա» դասընթացի ուսումնական ծրագրին: Հավելեց, որ դասագիրքը նախատեսված է և՛ բակալավրի, և՛ մագիստրատուրայի կրթական ծրագրերով սովորող ուսանողների էկոնոմետրիկ մոդելավորման հմտությունների զարգացման համար: Մատնանշեց, որ դասագիրքը ձևավորվել է շուրջ 20 տարվա դասավանդման փորձի արդյունքում, բավարարում է որպես դասագիրք հրատարակման բոլոր պահանջներին: Մասնավորապես, բոլոր բաժիններն ունեն էկոնոմետրիկ մոդելավորման տեսական հիմնադրույթների և դրանց գործնական կիրառության կապն ապահովող առաջադրանքներ (տեսական գիտելիքների ստուգման համար), խնդիրների լուծման օրինակներ, խնդիրներ, որոնք կարող են օգտագործվել ինքնուրույն և հետազոտական աշխատանքների կատարման ժամանակ: Ընդգծեց, որ գրքում զետեղված են ներդիրներ մաթեմատիկական վիճակագրությունից, որոնք անհրաժեշտ են էկոնոմետրիկ մոդելավորման ժամանակ տվյալների հետ աշխատելիս: Ամփոփելով նշեց, որ դասագիրքը գրախոսել են ամբիոնի դոցենտներ՝ տ.գ.թ. Ալվարդ Խառատյանը և ֆ.-մ.գ.թ. Աշոտ Կակոսյանը, առկա են երկու գրախոսների դրական կարծիքները, ամբիոնի որոշումը, ֆակուլտետի մեթոդխորհրդի դրական եզրակացությունը:

3. Հարց հնչեցրեց տ.գ.թ., դոցենտ Գ.Սահակյանը՝ նշելով, որ ներկայում ֆակուլտետի կրթական ծրագրերի մեծ մասը միջազգային հավատարմագրման փուլում է, մտավախություն չկա, որ հայալեզու գրականությունը կտանի ծուլության՝ օտար լեզվով գրականությունից օգտվելու խթանները կթուլանան:

4. Տ.գ.թ., դոցենտ Ն.Զրբաշյանը հարցադրմանը պատասխանեց՝ նշելով, որ դասագրքում զետեղված նյութերը շուրջ 40 անուն անգլերենով հրատարակված գրականության մշակման արդյունք են: Ամփոփելով նշեց, որ սույն հայալեզու դասագիրքը

իրապես մեծ դռներ կբացի ուսանողների համար՝ տնտեսական շտեմարաններից օգտվելու և գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու գործում:

5. Հարցի քննարկումն ամփոփելով՝ դեկան Կ.Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց երկու գրքերի հեղինակներին՝ շեշտադրելով կատարված մեծածավալ աշխատանքը, հույս հայտնեց, որ ամեն տարի մի քանի նման գրքեր կհրատարակվեն և առաջարկեց հարցը դնել քվեարկության:

4.2 ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 30.01.26թ. թիվ 5 նիստի երաշխավորությունը, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նաիրուհի Մխիթարի Ջրբաշյանի հեղինակած «Էկոնոմետրիկա (Մաս 1, Հիմունքներ)» վերտառությամբ դասագիրքը երաշխավորել տպագրության:

Դասագիրքը երաշխավորվեց տպագրության՝ միաձայն քվեարկությամբ (30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

5. ԼՍԵՑԻՆ. 2025/26 ուստարվա 2-րդ կիսամյակում պրոֆեսորի օգնականներ նշանակելու մասին հարցը:

5. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հայտնեց, որ ԵՊՀ-ում գործող «Պրոֆեսորադասախոսական կազմի օգնականի ներգրավելու կարգի» համաձայն արդեն չորրորդ անգամ ֆակուլտետի գիտխորհուրդը քննարկում է պրոֆեսորի օգնականներ նշանակելու հարցը: Ընդգծեց, որ մագիստրատուրայի ուսանողների համար այս գործառույթը համարժեք է մասնագիտական պրակտիկային, իսկ ասպիրանտների համար՝ գիտամանկավարժական բաղադրիչին: Նշեց, որ 2025/26 ուստարվա 2-րդ կիսամյակի համար այս հարցում միջնորդություն է ներկայացրել միայն Կառավարման և գործարարության ամբիոնը և հարցի քննարկումը սկսելու համար ձայնը փոխանցեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանին:

2. Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսորի օգնականներ նշանակելու միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ պրոֆեսորի օգնական ունենալու ցանկություն են հայտնել ամբիոնի 5 աշխատակից՝ դոցենտ, տ.գ.թ. Կ.Խաչատրյանը, դոցենտ, տ.գ.թ. Ա.Հակոբջանյանը, պրոֆեսոր, տ.գ.դ. Գ.Վարդանյանը, պրոֆեսոր, տ.գ.դ. Հ.Սարգսյանը, դոցենտ, տեխ.գ.թ. Հ.Զաքոյանը: Գործող կարգի համաձայն, ամբիոնը իրազեկել է ֆակուլտետի ասպիրանտներին և մագիստրատուրայի ուսանողներին, հավաքագրել է ստացված հայտադիմումները: Հավելեց, որ անձին որպես պրոֆեսորի

օգնական ներգրավելու երաշխավորությունը քննարկվել է Կառավարման և գործարարության ամբիոնի նիստում՝ սահմանված ժամկետում:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց պրոֆեսորի օգնականներ նշանակելու վերաբերյալ Կառավարման և գործարարության ամբիոնի ընդունած որոշումը հաստատել քվեարկությամբ:

5. ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 30.01.26թ. թիվ 7 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ 2025/26 ուստարվա 2-րդ կիսամյակի համար.

1) ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կառլեն Գագիկի Խաչատրյանի օգնական նշանակել՝ ամբիոնի առկա ուսուցմամբ 2-րդ տարվա ասպիրանտ Միլվիա Սարգսյանին:

2) «Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ, «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի ղեկավար, դոցենտ, տ.գ.թ. Աննա Հովիկի Հակոբջանյանի օգնական նշանակել՝ նույն կրթական ծրագրի առկա ուսուցման 1-ին կուրսի մագիստրանտ Անուշ Ծատուրյանին:

3) Ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Գագիկ Իշխանի Վարդանյանի օգնական նշանակել՝ ամբիոնի առկա ուսուցմամբ 2-րդ տարվա ասպիրանտ Ալիսա Գևորգյանին:

4) Ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Հայկ Լևոնի Սարգսյանի օգնական նշանակել՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ 1-ին տարվա ասպիրանտ Հայարփի Ավետիսյանին:

5) «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի ղեկավար, դոցենտ, տեխ.գ.թ. Հարություն Վարազդատի Զաքոյանի օգնական նշանակել՝ նույն կրթական ծրագրի առկա ուսուցման 1-ին կուրսի մագիստրանտ Սեդա Պողոսյանին:

ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսորի օգնականներ նշանակելու որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ (30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

6. Ընթացիկ հարցեր

6.1 ԼՍԵՑԻՆ. Երևանի պետական համալսարանի կողմից հայտարարված «ԵՊՀ-ում միջմասնագիտական մագիստրոսական թեզի կատարման համար կրթաթոշակի տրամադրման» մրցույթին՝ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում իրականացվող 2 միջմասնագիտական մագիստրոսական թեզերի երաշխավորման մասին հարցը:

6.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հայտնեց, որ 2025/26 ուստարում ԵՊՀ-ում հաստատված թվով 6 միջմասնագիտական մագիստրոսական թեզերից 2-ը իրականացվում

են Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում՝ «Ֆինանսներ» և «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական կրթական ծրագրերի շրջանակում: Հավելեց, որ այս գործընթացում ընդգրկված ուսանողների ներգրավվածությունը խթանելու համար հայտարարվել է կրթաթոշակի տրամադրման մրցույթ, որին մասնակցելու համար անհրաժեշտ է ֆակուլտետի գիտխորհրդի երաշխավորությունը և հարցի քննարկումը սկսելու համար ձայնը փոխանցեց նախ Ֆինանսների ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ Գ.Սահակյանին, հետո Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանին:

2. Ֆինանսների ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ Գ.Սահակյանը նշեց, որ «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանող Մերի Հրանտի Բասոյանի և Սոցիոլոգիայի ֆակուլտետի «Հասարակայնության հետ կապեր» (PR) մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանող Ջուլիետա Արտակի Հակոբյանի մասնակցությամբ իրականացվում է միջմասնագիտական մագիստրոսական թեզ՝ «Կորպորատիվ հաղորդակցության ռազմավարությունը որպես բանկի շահութաբերության ապահովման գործոն» վերտառությամբ: Ներկայացրեց միջմասնագիտական մագիստրոսական թեզի ղեկավարներին՝ ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Գնել Էդուարդի Սահակյան, ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, ս.գ.թ Նվարդ Արաիկի Մելքոնյան:

3. Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը նշեց, որ «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանող Անուշ Արամի Ծատուրյանի ու Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Կառավարման հոգեբանություն» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանող Արևիկ Արսենի Պպոյանի մասնակցությամբ իրականացվում է միջմասնագիտական մագիստրոսական թեզ՝ «Անհատականացված վարքագծային միջամտությունների մարքեթինգային ազդեցությունը սպառողական որոշումների վրա» վերտառությամբ: Ներկայացրեց միջմասնագիտական մագիստրոսական թեզի ղեկավարներին՝ ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Աննա Հովիկի Հակոբջանյան, ԵՊՀ Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ. Դավիթ Ռազմիկի Հայրապետյան:

Հարցեր չհնչեցին: Ելույթներ չեղան:

4. Հարցի քննարկումն ամփոփելով՝ դեկան Կ.Խաչատրյանը առաջարկեց՝ ֆակուլտետում իրականացվող 2 միջմասնագիտական մագիստրոսական թեզերը քվեարկությամբ երաշխավորել մրցույթին մասնակցելու համար:

6.1 ՈՐՈՇԵՑԻՆ.

1. ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանող Մերի Հրանտի Բասոյանի և

Սոցիոլոգիայի ֆակուլտետի «Հասարակայնության հետ կապեր» (PR) մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանող Ջուլիետա Արտակի Հակոբյանի մասնակցությամբ իրականացվող «Կորպորատիվ հաղորդակցության ռազմավարությունը որպես բանկի շահութաբերության ապահովման գործոն» միջմասնագիտական մագիստրոսական թեզը (ղեկավարներ՝ տ.գ.թ., դոցենտ Գ.Է. Սահակյան, ս.գ.թ., դոցենտ Ն.Ա. Մելքոնյան) երաշխավորել Երևանի պետական համալսարանի կողմից հայտարարված «ԵՊՀ-ում միջմասնագիտական մագիստրոսական թեզի կատարման համար կրթաթոշակի տրամադրման» մրցույթին մասնակցելու համար:

2. ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանող Անուշ Արամի Ծատուրյանի ու Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Կառավարման հոգեբանություն» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանող Արևիկ Արսենի Պպոյանի մասնակցությամբ իրականացվող «Անհատականացված վարքագծային միջամտությունների մարքեթինգային ազդեցությունը սպառողական որոշումների վրա» միջմասնագիտական մագիստրոսական թեզը (ղեկավարներ՝ տ.գ.թ., դոցենտ Ա.Հ. Հակոբջանյան, հ.գ.թ., դոցենտ Դ.Ռ. Հայրապետյան) երաշխավորել Երևանի պետական համալսարանի կողմից հայտարարված «ԵՊՀ-ում միջմասնագիտական մագիստրոսական թեզի կատարման համար կրթաթոշակի տրամադրման» մրցույթին մասնակցելու համար:

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում իրականացվող 2 միջմասնագիտական մագիստրոսական թեզերը մրցույթին երաշխավորվեցին՝ քվեարկության 30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ *Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ *Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ*